

ԲԱՅ ԼԱՄԱԿ ՀՀ-Ի ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Posted on May 13, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Հարգելի Պարոն Վարչապետ,

Մենք հեռավոր Սփյուռքի հայերից ենք, ովքեր, անձամբ կամ իրենց կազմակերպություններով, տարիներ շարունակ պայքարել են, որպեսզի մի օր Հայաստանն ազատվի իր շղթաներից: Եվ այդ օրը եկել է՝ շնորհիվ ժողովրդի հետ միասին Ձեր տարած պայքարին, Դուք՝ ժողովրդի կողքին և Ձեր կողքին՝ ժողովուրդը, որին տվեցիք ինքնավստահություն և պայքարելու քաջություն: Եվ այս առաջին քայլը հաղթանակ է: Եվ Ձեր հաղթանակը գեղեցիկ է ու օրինակելի: Ազատագրմանն ուղղված Ձեր երթն արժանացավ համակրանքի, նույնիսկ հիացմունքի՝ ողջ աշխարհում:

Մենք ողջունում ենք այս հիասքանչ հաղթանակը:

Հարգելի Պարոն Վարչապետ,

Մենք հեռավոր Սփյուռքի հայերից ենք, ովքեր, անձամբ կամ իրենց կազմակերպություններով, տարիներ շարունակ պայքարել են, որպեսզի մի օր Հայաստանն ազատվի իր շղթաներից: Եվ այդ օրը եկել է՝ շնորհիվ ժողովրդի հետ միասին Ձեր տարած պայքարին, Դուք՝ ժողովրդի կողքին և Ձեր կողքին՝ ժողովուրդը, որին տվեցիք ինքնավստահություն և պայքարելու քաջություն: Եվ այս առաջին քայլը հաղթանակ է: Եվ Ձեր հաղթանակը գեղեցիկ է ու օրինակելի: Ազատագրմանն ուղղված Ձեր երթն արժանացավ համակրանքի, նույնիսկ հիացմունքի՝ ողջ աշխարհում:

Մենք ողջունում ենք այս հիասքանչ հաղթանակը:

Տոնախմբության այս օրերին, Պարոն Վարչապետ, մենք մտովի Արթուր Սարգսյանի՝ «հաց բերողի» հետ ենք: Նա երջանիկ պիտի լիներ այս ամենն ապրելով: Մեր մտքերը բոլոր նրանց հետ են, ովքեր իրենց կյանքը տվեցին այս օրվա համար, մեր բոլոր հարազատների, որոնք այլևս մեզ հետ չեն: Կարծես թե կյանքը վերադարձրել է հայ ժողովրդին, ո՛ղջ հայ ժողովրդին, այն ամենն ինչ խլել էր նրանից, այն ամենն ինչ պարտական էր նրան:

Տոնախմբության այս օրերին, Պարոն Վարչապետ, հրճվանքով ու մեծ ուրախությամբ ենք ողջունում երեկ երեկոյան քաղբանտարկյալներից առաջինի՝ Անդրեաս Ղուկասյանի ազատ արձակումը: Մեր մտքերն այսօր Գարեգին Չուքասզյանի հետ են, ով 14 օր է որ հացադուլի մեջ է: Մեր մտքերը բոլոր մյուս քաղբանտարկյալների հետ են, որոնց խոստացել էք հնարավորինս շուտ ազատ արձակել, քանի որ նրանց արգելափակել են այն ուժերը, որոնց դուք հեռացրիք իշխանությունից: Նրանց տեղը Ձեր ու ժողովրդի կողքին է, որպեսզի, քայլ առ քայլ կառուցենք նոր, արդար, ազատ եւ անկախ

Հայաստան: Անդրեաս Ղուկասյանն երեկ հայտարարեց, որ Նոր Հայաստանն արդեն կա՛. «Ես բանտում էի՝ մի՛ Հայաստանում և ազատ եմ արձակվել մի ուրի՛շ Հայաստանում:»

Ձեզ ենք դիմում խնդրանքով՝ համաներում շնորհել բոլոր քաղբանտարկյալներին:

Հաջողություն ենք մաղթում, Հարգելի Պարոն Վարչապետ, Ձեր ապագա՝ Հայաստանում ու արտերկրում հուսադրող ու հուսալից առաքելության իրականացման գործում, հայտնելով մեր ողջ զորակցությունն ու լիակատար աջակցությունը :



Ընդունեք, Պարոն վարչապետ, մեր ամենաբարձր գնահատանքի արտահայտությունը:

Փարիզ 8/05/2018

Հայաստանում քաղբանտարկյալների աջակցության կոմիտե (CSPPA)
Հայկական Վերածնունդ - Փարիզ
Համագործակցություն Հայաստան
Հարյուրների խումբ

